

Ըստ Լեւոնի
Ֆիլարովի

Հրաձիգ

Թորոսի

Ճարպիկ

Կրրիճի

Ճասիչ





ՀՏԴ 82-45
ԳՄԴ 84-5
Թ 330

Թարումեան Ռուբէն
Թ 330 Գրածիգ Թորոսի՝ ճարպիկ կտրիճի մասին / Ռ. Թարումեան; Ըստ Լեոնիդ
Ֆիլատովի հեքիաթի.—Եր.: Գեղ. հրատ., 2022.— 56 էջ:

Սա ռուս նշանավոր դերասան եւ բանաստեղծ Լեոնիդ Ֆիլատովի
ամենահայտնի ստեղծագործության հայերեն տարբերակն է: Թեեւ բնագրի
ամբողջ կառուցվածքը, տողերի ճշտությամբ պահպանված է, սակայն
միջավայրը եւ հերոսները տեղայնացված են:

ՀՏԴ 82-45
ԳՄԴ 84-5

ISBN 978-9939-0-4066-0

© Պատճենաշնորհ (թարգմանությունը)՝ Թարումեան Ռուբէն, 2012

Ըստ Լեոնիդ Ֆիլատովի հեքիաթի

Հրաձիգ
Թորոսի՝
Ճարպիկ Կորիճի
Ճաստին

Հեքիաթ թատրոնի համար
(Ազգագրական նյութով)

Տեղայնացումը՝ Ռուբեն Թարումեանի



Գործող անձինք.

Թորոս

Արուս (Տատրակ)

Թագավոր

Չորավար

Արքայադուստր

Դայակ

Ջադու պառավ

Ձայն (Այն-Ինչ-Չի-Կարող-Լինել)

Չույգ կտրիճներ

Դեսպաններ

Ժողովուրդ

Պատմող (Խեղկատակ-ծաղրածու)

Խեղկատակ-ծաղրածու

Կհավատաք, թե՛ ոնց, լուս աշխարհում Յայոց կար
Թորոս-հրաձիգ, մի կտրիճ ճարպիկ: Ոչ սիրուն էր, ոչ
Էլ գեշ, ոչ խելոք էր, ոչ էլ էշ, ոչ կարմրայտ, ոչ՝
գունատ, ոչ հարուստ, ոչ՝ աղքատ, ոչ այսպես, ոչ՝
այնպես, այլ կար, պարզապես:

Բերում էր Թորոսը՝ ձկան ու այլ որսը: Արքային՝ ձուկ
ու որս, Թորոսին՝ բարի խոսք: Յյուրե՛ր պալատում,
ինչ՝ աստղեր երկնքում: Մեկը՝ Մարից, մյուսն՝
Երանից, կամ կողմից Ռուսաց. բոլորն էլ՝ սոված:

Մեկին՝ խեցգետին, կարմրախայտ՝ մյուսին, կամ մի
խոզ վայրի. ոնց կուզես՝ ճարի:

Մի անգամ ստանում է հրաման. լուսբացին, ուրբաթ,
ներկայանալ պալատ: Թագավորը՝ ճմուռ, գլուխը՝ մի
բուռ, բայց ինքը անդուր, չարությամբ լի գուռ: Նայում
է Թորոսին, ինչպես թուրքը՝ խոզին:

Թորոսը վախից՝ քրտնեց մեջքից, քունքում տրոփեց,
փորում զլզլեց, դե, ինչպես ասում են, հեքիաթն
սկսվեց...

Թագավոր

Առավոտյան լուսբացի
Կգա դեսպանն անգլացի,
Իսկ մեր տան Էղած-չէղածն է՝
Չոր պանիրն՝ առանց հացի:
Ախպեր, ճամփա դու ընկի՝
Ուտելու մի բան գտի.
Յավ, կաքավ, կամ նապաստակ, կամ
Որեւէ ուրիշ մեկի:
Չկարնա՞ս. էլ ի՞նչ անեմ.
Ես պիտի քեզ գլխատեմ:
Պետական կարգի խնդիր է՝
Տեղը բերո՞ւմ ես, կարծեմ:

Թորոս

Մի աչքով է՞ս ինձ նայում,
Ե՛ս եմ ու չե՞մ հասկանում...
Խեղքս հացով հո չե՞մ կերել,
Ինչն-ինչոց է չե՞մ տեսնում:
Վայ թե, երկրում, իմ վրան,
Յոյսն է ողջ քաղաքական.
Թե չճարեմ գոնե կաքավ՝
Կռիվ կլ՛նի անպայման:
Որ դեսպանը անգլացի
Սովից չտա մեզ քացի
Գլխիս ու կյանքիս գնով էլ
Կճարեմ կտոր հացի...

Խեղկատակ-ծաղրածու

Արքայի խոսք՝ քարերի հոսք: Ասի. արջ բերես՝ կգնաս
բռնես. Էդ է, ի՞նչ անես. կամ որս ու ձուկ, կամ բանտ
անձուկ: Անցավ Թորոսը հազար դարն ու փոսը, բայց
ամեն ինչ՝ զուր. ոչ ծիտ, ոչ՝ փետուր: Յոգնեց, ճար
չկա. գիշեր, տես, կգա: Թեկուզ որս չկար, պետք է
տուն դառնար: Մեկ էլ տեսնում է՝ ծիտ, տատրակ մի
վտիտ, նստած, թեւը կախ, նայում է անվախ...

Թորոս

Թարսութայունն է, այս քեզ բան,
Որսից չկա ոչ մի քան:
Արի խփեմ տատրակին էս,
Գոնե սրան կուլ կտան:
Համ էլ, ասեմ ձեզ, արժե.
Սրա միսը վատն էլ չէ:
Բաստուրմա դրած տատրակը
Կաքավին էլ չի գիջե...

Տատրակ

Թորոս, դու ինձ ձեռ չտաս,
Օգուտ չկա՝ դու գիդաս.
Մի կաթսա էլ ճաշ չես եփի,
Ոչ էլ բմբուլ կստանաս:
Վայ թե հյուրը ժամանած
Կուզի կարգին խորոված,
Իսկ իմ վրես միս էլ չկա,
Ինդալու են, էլ չասած...

Թորոս

Թե՞ չարքերն են կատաղած,
Թե՞ շոգից եմ բժժած,
Թե՞ կարող է ինչ-որ բան է
Ականջումս իմ խախտված:
Թե՞ արքան է կարգադրել
Եւ օրենք ազդարարել,
Որ ծտերից պահանջվում է,
Մարդու լեզվով բարբառել...

Տատրակ

Թորոս, նայիր, ճիշտ կանես,
Եթե քեզ հետ ինձ տանես:
Իսկ հենց մտնեմ ես քո տունը
Բախտդ ինձ հետ կգտնես:
Համ կթափեմ, համ կեփեմ,
Համ շորերդ կկարեմ,
Եւ ջուրակ կնվագեմ ու,
Թախտաբիթի կխփեմ...

Թորոս

Ի՞նչ հաշիվ է, չեմ ջոկում...
Դե լավ, տեղ գտի պարկում...
Տանը, փորձեմ գլուխ հանել,
Ո՞վ է՝ ուր եւ ինչն է՝ ում:

Խեղկատակ-ծաղրածու

Թորիկն առավ տատրակը, բերեց իր ցուրտ
հյուղակը: Տխուր նստել է, գլուխը կախել է:
Ու տխրության համար լուրջ պատճառ էլ կար:
Չհաջողվեց որսը ու գիտի Թորոսը.
արքան շատ բան չի հարցնի՝ գլուխն իսկույն
կթրցնի:
Տխուր իր դարդն է լալիս՝ աշխարհին հրաժեշտ է
տալիս: Հիշեց թռչնակին՝ ծառի տատրակին:
Ու ի՞նչ է տեսնում. տատրակի տեղում գեղուկի
կանգնած՝ չինար բոյն առած...

Արուս

Բարեւ Թորոս: Դուն ու ես
Ընտանիք ենք, թե գիտես.
Ես տիկինն եմ քո, Արուսը,
Ամուսնուհիդ հյու-հեգ:
Ի՞նչ ես Թորոս ջան լռում,
Ձո՞ւր ես պահել բերանում...
Թե՞ պսակս քո սրտով չէ,
Թե՞ զարդերս չես հավնում...

Թորոս

Հոգիս, վրադ անդադար,
Կնայեի դարեդար,
Սակայն լինել ամուսինդ
Չունեմ հիմա ոչ մի ճար...
Էսօր կանուխ առավոտ
Թագավորի եղա մոտ,
Թագավորն էլ հանձնարարեց
Մի որս՝ մեծոտ ու յուղոտ:

Թեեւ որսի պահը չէ
Արքայի հետ ի՞նչ վիճես.
Դե լավ, ասի, դե կճարեմ.
Վերջը, ծիտ է, փիղ հո չէ՞:
Օրն ամբողջ ես շրջեցի,
Բայց հեչ բան չխփեցի.
Ոչ մի կարգին թռչուն չկար,
Լոր ու ճնճողուկից բացի...
Ու ընկերդ քո հիմի,
Թռչկոտելու սիրտ չունի.
Վաղը արքան սրա համար
Իմ գլուխը կթոցնի:
Իսկ ես ո՞ւմ եմ պետք էդպես .
Ոչ գործին, ոչ տանը՝ քեզ,
Որովհետեւ ողջ իմաստս՝
Խեղքս է իմ բացառապես..

Արուս

Մի նվա ու մի տխրի.
Որսն, ուտեստը կճարվի:
Կանգնեք ահա իմ առջեւում,
Սոս Զայրի ու Սիս Զրայրի

*(Արուսը ծափ է տալիս՝ հայտնվում են երկու
հաղթանդամ կտրիճ)*

Չրամանն արդեն գիտե՞ք՝
Տեղն ու տեղը կատարե՛ք:

Կտրիճներ

Դուք կարող եք անհոգ լինել.
Կարվի արագ, լիարժեք:

Խեղկատակ-ծաղրածու

Իսկ արքան ու դեսպանը զննում են սեղանը:
Դայակն է կողքին, եւ արքայազնուհին:
Սպասում են Թորոսի խոստացած որսին: Ի՞նչ
զոռ տան լեզվին էդ սոված փորին:

Սեղանն էլ դատարկ է. գազար ու կաղամբ է,
սամիրթ ու համեմ՝ էլ ոնց քեֆ անեն:
Հյուրը տխրում, ոտքերն է ճոճում, սփռոցի
ծակերն է ուտումնասիրում: Արքան զայրանում,
էլ չի համբերում, արդեն թորոսի մայրիկին է
հիշում:
Մեկ էլ՝ հանկարծի՝ բոքոններ հացի, դուլլով
խավիար, եփած հնդկահավ, իշխանի ապուր, ու
խոզի ապուխտ. ուտեստներ նման՝ անթիվ
անսահման: Ուտեստի ծովում զրույց է կայնում...

Թագավոր

Հետաքրքրում է մեզ
Ձեր զարգացման չափ ու պես.
Ո՞նց եք ցանում դուք շաղգամը.
Առանց կճեպ, թե՞ էնպես...

Դեսպան

Յե՛ս:

Թագավոր

Հետաքրքրում է մեզ
Ձեր սնվելու ձեւ ու պես.
Ո՞նց են ձեզ մոտ սուրճը խմում,
Դա՞ռը, քա՞ղցր, թե՞ էնպես...

Դեսպան

Յե՛ս:

Թագավոր

Հետաքրքրում է մեզ
Այսպիսի նաեւ մի թեզ.
Ո՞նց են ձեզ մոտ կանայք զբոսնում
Վարտիքներով, թե՞ էնպես...

Դեսպան

Յե՛ս:

Դայակ

Դեսպանից դու ամաչի...
Լրի՞վ խելթդ բոնը չի...
Ինչի մասին ով էլ խոսի
Կանանց վրա կշռջի:

Թագավոր

Էլի՞ Էշդ ես բշում.
Բանտ ընկնե՞լ ես երազում:
Յո խոսքերս հենց էնպե՞ս չեն.
Մտածված եմ գրուցում:
Աղջիկն է՛ն ա, տես բոյին,
Ու նման ա բոբոյին:
Ես էլ ես ա, մտածում եմ
Մեր ծոփն տանք դեսպոյին:
Միայն պետք ա մեզ սկզբից,
Գրավել նրան տակից
Նուրբ ակնարկներ նրան անել
Իմիջիայլոց ու հեռվից:

Դայակ

Ես դեսպանի հետ հիմա
Ես էլ չեմ ամուսնանա.
Միայն նայում ա կեղտոտը
Թե ո՛նց մի լավ կշտանա:
Յա ասում ա «յես» հա «յես»,
Բայց անկուշտ ա խոզի պես.
Աչքդ թեթես Յայաստանը
Կիժո՛հ՝ պարզապես:

Թագավոր

Կա՛մ բերանիդ դիր փակոց,
Կա՛մ էլ կուտես լավ տփոց.
Լրիվ արդեն վախեցրել ես
Կցորդներին թանկանոց:
Յիսպայնայից ժամանած,
Գրանդ էր հարուստ ու հարզված:
Ականջներում ադամանդներ:
Տարբերակ էր՝ երազած:

Իսկ դու տարար բերեցիր՝
Նրան մեխին նստեցրիր,
Ու հյուրին էլ բնական է,
Քաղաքապետ զայրացրիր...

Դայակ

Լավ եմ հիշում եղ գրանդին,
Եղ լափելու տաղանդին.
Քիթն էնպես էր խորթել ափսեն,
Որ յուղ թափեց փողկապին:
Յեչ չէր ուզում բան ասի.
Թութակի պես՝ «սի» հա «սի»՝
Այդ միջոցին լպստելով
Ոսկորները վարագի:

Թագավոր

Ես էդ քո վարքագծի
Վերջը կտամ, իմացի.
Կսատկացնեմ. չեմ կատակում,
Լուրջ եմ ասում, լավ գիտցի:
Գերմայնայից ժամանած
Բարոն եկավ օրն անցած,
Եղ անգամ էլ չդիմացար
Թողիր Նրան տվայտված:
Ո՞վ էր Նրան որ բռնեց
Սատկած մկներ մատուցեց
Ախր դու վնասարար ես,
Ա՛յ անաստված հոգու ցեց...

Դայակ

Ճիշտ է, բարոնն էդ անտեր
Նույնպես ուտել կսիրեր
Ագռավների մեջ հայտնվեր
Նրանցից էլ կխլեր:
Տեսքից հպարտ՝ «յա» հա «յա»,
Ներսից՝ խոզ էր համարյա,
Ձրի տայիր՝ խոտ էլ կուտեր,
Կապոցներով: Միանձնյա ...

Թագավոր

Դու լրտես ես: Իմացի՜
Բանտում քեզ տեղ կբացվի
Ես Էնպես չար տղամարդ չեմ,
Բայց լրտեսին կհասնի:
Յիմա դու ինձ լավ լսա.
Էլ ո՞նց գտնենք մենք փեսա.
Փեսացուներ հերթ չեն կանգնած
Լավ մտածի ու ասա:
Թե մեկից լիներ ավել՝
Կարելի էր եւ ընտրել:
Թե որ չէ, չանթի եղածը,
Ինչ էլ լինի. շուն թե գել...

Արքայադուստր

Թե արքա ես դու հայոց,
Իշխիր երկրում կուզես ոնց,
Իսկ իմ բախտին չխառնվես,
Սիրուս հետ դու չունես գործ:
Կցորդ՝ տանն այս կա հաստատ
Ամեն հարկում հարյուր հատ,
Իրենց օձանելիքից էլ
Շո՛ւնչս է կտրում անընդհատ...

Թագավոր

Կույր է սերը, որ ուզես.
Դեսպանին էլ կսիրես:
Առեւտրական մեր գործերն էլ
Սենց ձեռի հետ կդզես:
Ես առիթով կվերցնեմ
Վրեն ծիրան կնաղդեմ,
Յանրությունը համաձայն է,
Միայն դու ես Էստեղ դեմ...

Արքայադուստր

Որքան կուզես կիտիր ունք.
Որքան կուզես ծխիր խունկ.
Կրկնում եմ. անհատն ունի
Ազատ սիրո իրավունք:

Գուցե գործը հաջողվեր՝
Նշանդրեքով ավարտվեր,
Եթե հանկարծ քո հրաձիգ
Թորոս-կտրիճն ինձ ուզեր:

Թագավոր

Դե լավ, պրծանք, ցվրվի...
Ու փեչի մոտ շնթռվի,
Կամ էլ քշի քո սենյակը
Ու սոֆեջյա սովորի:
Իսկ անիծյալ Թորոսին,
Էդ այլանդակ բորբոսին,
Կռազ քացով կհասկացնեմ
Որ մոռանա քո մասին...

Խեղկատակ-ծաղրածու

Կար զորավար պալատում: Նա լուրեր էր հավաքում:
Մորուքը ցցում՝ քաղաքում զբոսնում. շան պես
հոտոտում, ով է այլ խոհում: Ականջ դնում
զրույցների՝ փնտրում դավադիրների: Յենց բան կլսի՝
տետրում կգրի: Իսկ ճիշտ եւ ճիշտ յոթին՝ Չեկույց՝
արքային:

Թագավոր

Ի՞նչ ես տխրել զորավար.
Ի՞նչդ է անբավարար,
Թե՞ մաճարից շատ ես խմել,
Թե՞ ձիուց ես ընկել վար:
Թե՞ գործերդ են հյուժիչ,
Թե՞ բանակն է աչքիդ քիչ,
Թե՞ գտել ես թնդանոթի
Փողի խոտան կամ այլ ինչ:
Չեկուցի՛ր, պատճառը տուր,
Թե ինչու ես դու տխուր.
Ես ուզում եմ ճիշտ իմանալ,
Ով, որտեղ, ինչու եւ ուր...

Չորավար

Վերջում անցած շաբաթվա,
Մեր կտրիճի տանն եղա,
Յենց տեսա նրա տիկնոջը
Աստիճանից վայր ընկա:
Երրորդ օրն է՝ չեմ խաբում
Սուրը ձեռս չեմ առնում,
Երազկոտությունս է աճել.
Գիշերն աչքս չի կպնում:
Նախորդ օրն էլ, քեզ ասեմ,
Յորինեցի մի պոեմ,
Բժիշկները վախենում են,
Որ սիրուց կխփնվեմ...

Թագավոր

Տեսա՞ր Թորոս-կտրիճին...
Գիտեր, ես էլ չունեմ կին:
Յըլը արագ էստեղ պալատ
Ինձ մոտ բերեք էդ ծոին:
Իսկ խորամանկ Թորոսին
Մի լավ զարկե՛ք երեսին,
Որպեսզի էլ ես կողմերում
Ես չտեսնեմ էդ եզին...

Չորավար

Ծտին բերել՝ կբերենք,
Ժողովուրդի՞ն ինչ ասենք:
Թե իմանան ում արածն է
Ձեռներից հազիվ պրծնենք:
Մարդիկ շատ են ձեռ առել.
Չփորձես մի բան ասել:
Մենք Թորոսին լավ չենք նայում,
Իրենց՝ շատ է դուր եկել:

Թագավոր

Լսի՛ր, էջ ես տնաշեն,
Միայն է՞ս օր, թե՞ ամեն:
Ի՞նչ ա ես իմ նախարարին
Էդ է՞լ պիտի բացատրեմ:

Որ իմ մասին բամբասուք
Չտարածեն ծակ ու ծուկ,
Պիտի գործես ըստ օրենքի,
Այն է՝ գործես խիստ ծածուկ:
Ես էլ, գիտես, բարեկամ.
Քո պարզեւը կհոգամ.
Դարբինները գործը գիտեն
Կկոփեն շքանշան...

Խեղկատակ-ծաղրածու

Չորավարն օրնիբուն խելքն ի մի էր բերում: Միտք էր անում քրտնաջան, թե ոնց թորոսին վերջ տան: Բայց չկար վարկած, խելքում թթված: Մեկ էլ միտք փայլուն. հիշեց ընկերուհուն, ծուռ ոտ վիուկին՝ Ջաղու պառավին. «Գնամ նրա մոտ, գուցե տա խորհուրդ...»
Իսկ նա անտառում խոտ էր հավաքում, դեղ ու թույն եփում: Հենց հեռվից նկատեց՝ հավաքածը կորցրեց. տխուր էր, անհամ՝ առանց բարեկամ...

Ջաղու պառավ

Ի՞նչ ես դեմքովդ փոխվել,
Գունատվել ես, մռայլվել...
Զլի՞ ոռան ա լույսը կտրել
Զլի՞ թուրքն ա գետն անցել:
Միքիչ դաղծով թեյ խմի
Ու մարմնովդ կազդուրվի.
Հո քիմիական ձիբիլներ չեն,
Պարթեւներ են անտառի:
Ախպեր, էս դաղծի միջին,
Կա վիտամին շատ կարգին.
Ասեմ, ոչ մի զորավարի
Զի խանգարի վիտամին...

Չորավար

Պրծի պառավ, լավ եմ ես...
Խորհուրդ պիտի ինձ ասես...
Սկյուռ ու ոզնի արի ցրի,
Լուրջ բան հիմի կասեմ քեզ:

Կա մի կտրիճ-հրաձիգ
Շատ է շունը եղ ճարպիկ...
Ինձ էլ հես ա, հրաման եղավ
Վերջ տալ դրան սուս-փուսիկ:
Բայց ինչպե՞ս: Բռնես գյուլլե՞ս՝
Բամբասանքներ կբերես...
Ո՞նց խորամանկ դրան կորցնենք,
Կարա՞ս պառավ ինձ ասես...

Ջադու պառավ

Կախարդիկ պառավ, բիձա
Դագաղ՝ ղուշի հարիսա,
Ձոջը վերից, դառը՝ տակից,
Յրաձիգի բախտն ասա:
Թե լակոտ ա նա անպետ,
Բայց իրեն զգում ա պետ,
Թող նա վաղը ճարի ոսկով
Ասեղնագործած կարպետ:
Որ կարպետի եղ վրա,
Ամբողջ երկիրն երեսա:
Իսկ թե ճարել չկարենա՝
Մեղքն իր վիզը կունենա...

Չորավար

Ա՛յ դու պառավ: Ա՛յ վարպետ:
Անցան դարդերս իմ անհետ:
Քիչ ա մնում հենց անտառից
Տանենք դարձնենք վարչապետ:
Բաբվի կողմերը հիմի,
Ո՞վ գիտի թե ինչ կըլի,
Իսկ քեզ հետ ես կարամ գնալ
Թե՛ հետախույզ, թե՛ կռվի:
Լավության տակից կելնեմ.
Կուզե՞ս բրդով վճարեմ,
Կամ՝ արծաթով, ադամանդով,
Կուզե՞ս ոսկով քեզ պատվեմ...

Ջաղու պառավ

Գնա ախպեր, մի հուզվի,
Դու եղ մանրը քեզ պահի.
Չոգուս պարտքն ա, որ տալիս եմ.
Բարին փողով չի չափվի:
Թե նոր ինդիր կբացվի,
Տեղս գիտես՝ համեցի,
Մենք էլ էստեղ գազաններ չենք,
Միշտ էլ կօգնենք, իմացի...

Խեղկատակ-ծաղրածու

Կանչում է արքան Թորիկին, ճարպիկ
հրածիգին: Դեռ ինդիրը չասած, նստած է
կատղած: Ձեռքերն է ճոճում, ոտքերով դոփում,
աչքերով խոցում, մի խոսքով՝ վախցնում: Ու
էնքան է ուզում Թորոսին կորցնել, որ քորը եկել
ջանն է մտել...

Թագավոր

Մինչեւ վաղը ոնց կուզես՝
Ինձ մի կարպետ կճարես...
Պետական կարգի ինդիր է
Պիտի ճղվես, բայց՝ բերես...
Որ կարպետի եդ վրա,
Ամբողջ երկիրն երեւա:
Թե չե էս իմ պատշգամբից
Բան չեմ տեսնում համարյա:
Ինչ որ պետք է չճարես՝
Մի գլխով կկրճատվես.
Առավոտյան լուսաբացին
Դահիճի մոտ կուղարկվես:

Խեղկատակ-ծաղրածու

Թորոսն եկավ տուն, դարդից համր, անգույն: Նստեց
անկյունում, առաստաղին է նայում, լուս աչքերը
արցունք է պատում: Արուսը կանչում է, իսկ նա լռում
է, ոչինչ չի ուզում, նվում է, տնքում...

Արուս

Ի՞նչ ես այդպես տառապում:
Ոչ ուտում ես, ոչ՝ խմում:
Թե՞ շիլան է տակը կպել,
Թե՞ դոկտորն չես հավնում:

Թորոս

Ի՞նչ ուտելիք: Չգվացրեց.
Արքան էլի ինձ կանչեց:
Էդ այլանդակ սրիկային
Դատ-դատաստան չճարվեց:
Պետք է կարպետ հայթայթել
Ասեղնագործ, ոսկեթել,
Ամբողջ հայոց երկրի չափով,
Որքան կարաս աչք նետել...

Արուս

Մի նվա ու մի տխրի.
Թող ծերուկն իրեն խժռի:
Կանգնեք ահա իմ առջեւում,
Սու Յայրի ու Սիս Յրայրի

*(Արուսը ծափ է տալիս՝ հայտնվում են երկու
հայթանդամ կտորիճ)*

Յրամանն արդեն գիտեք՝
Տեղն ու տեղը կատարե՛ք:

Կտրիճներ

Դուք կարող եք անհոգ լինել.
Կարվի արագ, լիարժեք:

Խեղկատակ-ծաղրածու

Թորոսն առավոտ՝ պալատ դրեց ոտ: Բարձր դուռ
բացեց, կարպետով հանդերձ: Ժպտում է կանգնած.
ու չի վախեցած: Արքան զարմացավ, նույնիսկ
համրացավ: Չայրույթն է տանջում, բայց ցույց տալ
չի ուզում: Յայացքը խաղաղ է, թե, իբր, ուրախ է...

Թորոս

Ուզեցիր երեկ կարպետ՝
Դե, բերել եմ քեզ, վարպետ:
Ե՛լ նկարը, ե՛լ գույները.
Ինչ որ պետքն է. կետ առ կետ:
Ամբողջ Յայքը սփռված
Կտեսնես արտացոլված
Այս կարպետը իմ տիկինը
Քեզ ի նվեր է գործած...

Թագավոր

Ա՛յ դու կտրիճ: Ա՛յ ջահել:
Քանի՞ կին ես դու առել:
Թե՞ մանվածքի գործարանի
Ցեխի հետ ես պասկվել:
Թորոս, թեկուզ գեղանի,
Բայց կին ունես միայն մի,
Իսկ օրվա մեջ որ սա գործվի՝
Մի գումարտակ պետք կըլ՛նի...

Թորոս

Թե՞ զարդերն են անհաջող:
Թե՞ գույներն են ճչացող:
Կարամ հետ վերցնեմ պատվերը
Ու գնամ բարեհաջող:
Էս կարպետը նույն վայրկյան,
Չարչիներին ես կտամ,
Ու արվեստը Յայաստանից
Թող հեռանա Ամստերդամ...

Թագավոր

Ծիշտ կլիներ քեզ գլխանց,
Մտրակեի մեջքից ցած,
Որպեսզի դու ձեռ չառնեիր
Բարձրաստիճան լուրջ մարդկանց:
Բայց ես կողմ եմ էն կարգին,
Որ օրենքը միշտ հարգվի
Նենց որ առ քեզ ճամփի ծախսդ
Ու էստեղից ցվրվի...

Խեղկատակ-ծաղրածու

Կանչում է արքան զորավարին. ոչ երանի էդ
ախմախին: Դարձել է արքան բազուկի նման, իսկ
երբ կարմրած է, հաջորդը՝ հարված է: Խփում է համ
էլ, մեկից ոչ ավել, բայց դիպչում դնչին կամ հենց
ճիշտ աչքին: Չորավարը դա գիտի իր փորձից. աչքը
կապած է հեքիաթի սկզբից...

Թագավոր

Չը՞ ախպեր ջան, ինձ աշի.
Միքիչ փստա՞ց քո հաշիվ:
Բայց դե հաստատ ես միքիչը
Մի հինգ տարվա կբաշի:
Փորով լավ ես լենացել,
Իսկ գլխովդ՝ նիհարել:
Նենց որ, խելքդ բյուջետային
Չացով արժի լրացնել...

Չորավար

Նստացրու բերդ, թե կուզես՝
Որքան որ հաճո է քեզ.
Մեկ է, չի մտնի ուսումը
Չիմարիս գլուխը ես:
Տայիր ձի, սուսեր, վահան
Եւ ուղիղ գյուլի բերան:
Պալատական խարդավանքներն
Իմ խելքի համար չեղան:

Թագավոր

Դու էդ «ձերդ քաջություն»,
Թարգի խոսել էշություն
Դու ձեւ գտի՝ առանց սրի
Արձանագրենք հաղթություն:
Իսկ թե շարժվես Նույն խելքով,
Էլ չասես, թե ում մեղքով.
Ես կդգեմ քո մոռվը
Անձամբ հենց ես բռունցքով...

Խեղկատակ-ծաղրածու

Իգուր Էր գորավարը հաշվում ավարը. չեղավ մի փորձից պրծնել Թորոսից: Նորից Ես մեղկի գլուխ կճեղքի: Իսկ գլխում անտեր գոնե միտք լիներ: Խորիեց, խորիեց, հեչ բան չորոշեց: Ու մնաց Ես հարցով Ջաղուկի հույսով: Ելի ձի նստեց ու անտառ շարժվեց...

Ջաղու պառավ

Ի՞նչ Ես Ելի դու մռայլ,
Նո՞ւյն պատճառն ա, թե՞ մեկ այլ:
Վրացի՞ն ա երես առել,
Թե՞ պարսիկներն այլեւայլ:
Ահա քեզ բորբոսաթուրմ
Չեչ սրանից չե՞ս խմում:
Միքիչ խմի՛ կմոռանաս
Ունայնությունն Ես կյանքում:
Շուտ հանում է ցավ ու դող,
Թեեւ լավը չի համով.
Վաղը արդեն առողջ կըլ՛նես,
Թե չմեռնես գիշերով...

Չորավար

ՉԷ, կտրիճն ա դարողը իմ.
Վերջ չկա իմ ցավերին:
Դրանից Էլ վատառողջ եմ,
Ժպիտ չունեմ իմ դեմքին:
Շատ խորամանկ գտնվեց
Մեր քթերը տրորեց
Դու ինչքան Էլ կախարդեցիր,
Նա կարպետը Էդ ճարեց:
Տեսքից հարի՛՛ֆ ա թվում,
Բայց գլխով ա աշխատում,
Նենց որ միքիչ լավ կախարդիր:
Չոգո՛վ: Ի՞նչ ա տե՛ս բացվում:

Ջաղու պառավ

Կախարդիր պառավ, բիճա
Դագաղ՝ դուշի հարիսա,

Ձոջը վերից, դառը՝ տակից,
Յրաձիգի բախտն ասա:
Դե՛ ... Ըհը՛ ... Ահա՛ ... Էսպե՛ս...
Թող մի եղևիկ բերի ձեզ:
Եղջույրներն էլ դրա լինեն,
Մաքուր ոսկուց հրակեզ...
Թեկուզ աշխարհը անցնի՝
Այդպիսիք նա չի գտնի.
Քեզ ասում եմ որպես գիտակ
Մեր բնության հայրենի...

Խեղկատակ-ծաղրածու

Կանչում է արքան Թորոսին, մեր ճարպիկ հերոսին:
Չեղավ շունչ բաշի, տուն հասնի, ճաշի, իսկ սրիկա-
արքան ունի սոր հրաման: Եռում է ուղեղն արքայի,
արի ու Թորոս՝ չարչարվի: Մի խոսքով կյանքը մեր
բարեկամի նման է դառը շաղգամի...

Թագավոր

Ծուլությունդ դե՛ն գցի
Տեղն ու տեղն անցի՛ գործի:
Պետական կարգի խնդիր է՝
Եղջերու ինձ մատուցի:
Թե ծառա ես արքայի,
Գործը արագ կատարի
Բեր եղջերու՝ եղջուրներն էլ,
Մաքուր ոսկուց որ լինի:
Չփորձես հակաճառել,
Անհրաժեշտ է կատարել,
Թե չէ, հաստատ էսօր եւեթ,
Կկարգադրեմ գլխատել...

Խեղկատակ-ծաղրածու

Թորիկն եկավ տուն՝ արտասուքով արքուն: Նստեց
ճրագի մոտ՝ անտրամադիր, դարդոտ: Կինը գիրկն է
զցվում, իսկ նա կնոջը նույնիսկ չի նայում: Լալիս է
նստած՝ ունքերը կիտած...

Արուս

Դու ինչո՞ւ ես մռայլված:
Եւ ինչո՞ւ ես դարդոտված:
Թե՞ քյաբաբը անալի է,
Կամ էլ վա՞տ է խորովված:

Թորոս

Բա ճաշելու տե՞ղ մնաց
Թագավորը անիծված
Առավոտվա համար Նորից
Առաջադրանք ինձ ասաց:
Նա դաժան է երեւի
Թշնամուց էլ ավելի.
Բեր եղջերու՝ եղջուրներն էլ,
Մաքուր ոսկուց որ լինի...

Արուս

Մի նվա ու մի տխրի.
Դարդն արցունքով չես ցրի:
Կանգնեք ահա իմ առջեւում,
Սոս Զայրի ու Սիս Զրայրի

*(Արուսը ծափ է տալիս՝ հայտնվում են երկու
հայթանդամ կտրիճ)*

Զրամանն արդեն գիտեք՝
Տեղն ու տեղը կատարե՛ք:

Կտրիճներ

Դուք կարող եք անհոգ լինել.
Կարվի արագ, լիարժեք:

Խեղկատակ-ծաղրածու

Թորոս լուսբացին՝ պալատի դարպասին. Այցելեց
արքային՝ եղջերուն կողքին: Արքան պապանձվեց,
ծախ կողքը ծակեց: Կնգվեր ճնվի պես, բայց դե ի՞նչ
անես. հորանջում է նստած՝ զայրույթը զսպած...

Թորոս

Շատ չե՞ս սպասել: Օ՛ր բարի:
Կուզես մի հատ 'ստեղ նայի:
Եղջերու էր քո ուզածը
Առ քեզ, վերցրու, վայելի:
Եւ նկատի. հրեղեն
Եղջուրները՝ ոսկեղեն.
Առանց լապտեր դրանք կարան
Գիշերները լուսացնեն...

Թագավոր

Եղնիկներից էր, հիմի,
Ոչ Թիֆլիս կամ, ոչ՝ Գյումրի:
Ի՞նչ Գյումրի, Նույնիսկ Բաղդադ էլ
Չագիվ մի չորս հատ լինի:
Դե, գցի-քոնի մի հատ.
Ուր ենք մենք, իսկ ո՞ւր՝ Բաղդադ:
Թե՞ գիշերով Բաղդադ եղար
Ու Եսոյ հասար պալատ...

Թորոս

Չորս արեւ, ա՛յ անգոհ,
Եղնիկից է՞լ ես դժգոհ:
Իսկ երեկ կպած ասում էր
Պետք ա եղնիկ արագով...
Թե հարուստ ես, երեկ
Չանձնեմ Բաղդադ՝ տերերին.
Ո՞վ է Էնտեղ հիմա իշխում.
Ա՛յ թե տղեն կիրճվի...

Թագավոր

Լսիր Թորոս, դու թարգի
Ակնարկներդ էդ կարգի:
Թե չէ, գանգո, լավ իմացի
Դահճի կացնով կճաքի:
Բայց դե թքած, ըստ պատվի
Արած գործդ կհարգվի
Նենց որ առ քեզ ճամփի ծախսդ
Ու Եստեղից ցվրվի...

Խեղկատակ-ծաղրածու

Արքան զորավարին է կանչում, հենց անկողնուց
հանում: Խառնված զորավարը, փնտրում է շավվարը,
հասկանում է, որ քեֆ չի հեռանկարը: Արքան գահին
է նստած՝ աշխարհի վրա կատաղած: Չայրույթից
սեւացած, ինչպես փայտն ածխացած...

Թագավոր

Շատ տանջվեցիր բարեկամ,
Բայց չընկավ Թորոսն ուռկան:
Քո մասին արդեն կազմված է
Չատուկ մահախոսական:
Պետք է միայն որոշել,
Թե ինչպե՛ս քեզ հոշոտել.
Մոմակալով իջնել գլխի՞դ,
Թե՞ մութակով ես խեղդել...

Չորավար

Տիրակա՛լ վրիպեցի:
Առ քեզ թուրը, հարվածի՛:
Միայն արդեն եդ Թորոսի
Գործին դու ինձ մի լծի:
Որ հիմար եմ կներես.
Էությունս ա եդպես:
Ա՛յ թե ինչ-որ գրոհ լիներ
Կամ էլ կռիվ պարզապես...

Թագավոր

Չա, խրոխտ ես դու թրով,
Բայց մի բան հիշի բարով.
Թորոսին պիտի հաղթենք մենք
Ոչ թե թրով այլ խելքով:
Իսկ թե էլի հաջողես,
Էնքան, որքան մինչեւ ես,
Ինքս քեզ կկացնահարեմ,
Իշի քուռակ աներես...

Խեղկատակ-ծաղրածու

Կրկին հիմարը ձգեց խելքի լարը: Իսկ խելքից էլ կար
ոչ շատ մեծ պաշար: Խորիեց, խորիեց՝ ոչինչ
չհնարեց: Կրկին ձի թամբեց ու անտառ ուղղվեց:
Ջաղուն հենց տեսավ՝ մինչ Կովկասը փախավ: Բայց
մտածեց, դարձավ. չբերի գլխին ցավ...

Ջաղու պառավ

Աչքիս լավ չես երեւում:
Շուրթիդ պզուկ ա ուռում:
Չկորցնես առողջությունդ,
Քաղաքական պայքարում...
Դեղ փորձիր ոգնու ծերտով.
Շատ բուժիչ ա, կազդուրող:
Ու մեղրից էլ օգտակար ա,
Թեկուզ մեղր չի համով:
Եիշտ ա, վատ են դա մարսում,
Ու երբեմն էլ մեռնում,
Բայց ովքեր որ նալ չեն տնգում
Ծերություն են մինչ ապրում...

Չորավար

Լսի՛ Ջաղու, մի՛ ֆռռա:
Դու մի հնար ինձ ասա:
Ձեւ գտի, որ թագավորը
Էդ Թորոսի վերջը տա:
Ինչ արեցիր դու, պառավ,
Ոչ մի զահրմար դուս չեկավ.
Ոսկեեղջյուր էդ եղնիկը
Գնաց Թորոսը գտավ:
Խելքդ դու օդափոխի
Ու մի կարգին կախարդի.
Մեր Թորոսը ինչպես պարզվեց,
Էնքան էլ ապուշը չի...

Ջաղու պառավ

Խորամանկ եմ ես, գիտես
Տականքությամբ՝ ներքնապես,

Բայց ես օրով դու ինձանից
Կախարդություն չինդրես...
Ձանս ցավում աս, ծակում
Մեջս կրակ աս այրում...
Քեզ ասեմ, ուղեղաբորբ եմ
Ինձ մոտ արդեն կասկածում...
Չէ, շատ վատ եմ, իսկապես.
Մեջքիս խրթոց կլսե՞ս:
Մի խոսքով, թե բանն էդպես աս
Անաշխատունակ եմ ես:

Չորավար

Վատառո՞ղջ ես՝ չտնքաս՝
Գետից մի գորտ կուվ կտաս
Լավագույն բժշկությունը,
Բնությունն աս, դու գիդաս:
Դու ուղեղս չարդուկես.
Նույնիսկ, ասեմ, չփորձես:
Լավ կըլ՛նի տականքությունդ.
Աշխատանքի գործադրես:
Իսկ փորձես հակաճառել
Գլխից կարող ես գրկվել.
Եիշտ աս, դու ընկերուհիս ես,
Բայց դե պետք աս կարգ պահել...

Չադու պառավ

Կախարդի պառավ, բիձա
Դագաղ՝ դուշի հարիսա,
Ձոջը վերից, դառը՝ տակից,
Չրաձիգի բախտն ասա:
Թող իրեն դրսեւորի,
Թող Թորոսը ձեզ բերի
Այն-ինչ-Ամբողջ-Լուս-Աշխարհում-
Երբեք-Չի-Կարող-Լինի:
Դե, Թորոս հիմա սպասի
Չաստատ գործը կբացվի
Արդեն է՛ս առաջադրանքը
Կյանքում մոտո՞ղ չի ստացվի...

Խեղկատակ-ծաղրածու

Կանչում է արքան Թորոսին, ճարպիկ կտրիճին: Գործ ունի կրկին պետական կարգի: Մի՞թե վերջ չի լինի չարչարանքին: Հեքիաթը միևնույն, իր կեսին է դեռ...

Թագավոր

Կարգադրում եմ քեզ ճարել
Ա՛յն-հնչ-Չի-Կարող-Լինել:
Գրի կառնես անվանումը,
Քանի դեռ չես մոռացել:
Չկատարե՞ս, ի՞նչ ասեմ.
Ես քեզ կփոշիացնեմ,
Քանի որ էդ քո խասյաթը
Ձանձրացրել ա ինձ արդեն:
Նենց որ դեմքդ մի ծոփ
Եւ իսկույն ճամփա ընկի
Պետական կարգի խնդիր է
Հասկանում ես երեւի:

Խեղկատակ-ծաղրածու

Թորոսն եկավ տուն սարսափով լեցուն: Սպիտակ՝ կավճի պես. իրոք, ի՞նչ անես: Նստեց անկյունում՝ շղարշն աչքերում: Գիրկն ընկավ Արուսը, իսկ Թորոսն անհույս է... Տխուր կլինես, թե մահը տեսես...

Արուս

Ի՞նչ է, հոգիս, պատահել,
Դու ինչո՞ւ ես կատաղել:
Թե՞ փարիզյան իմ աղցանում
Շամպինյոններ չեմ լցրել...

Թորոս

Ճաշացանկդ Արուսյակ,
Բացառիկ է, անկրկնակ,
Բայց դե կյանքս իմ Արուս ջան,
Կործանել են բովանդակ:
Ի՞նչ անել եւ ո՞նց վարվել...
Ինչպե՞ս ցավը դարմանել.

Ինձնից արքան պահանջել է
Այն-Ինչ-Չի-Կարող-Լինել...

Արուս

Մի նվա ու մի տխրի.
Դարդն արցունքով չես ցրի:
Կանգնեք ահա իմ առջեւում,
Սու Յայրի ու Սիս Յրայրի

*(Արուսը ծափ է տալիս՝ հայտնվում են երկու
հաղթանդամ կտրիճ)*

Յրամանն արդեն գիտե՛ք՝
Տեղն ու տեղը կատարե՛ք:

(Լռությու՛ն)

Կտրիճներ

Ներողություն տիրուհի,
Էս մի գործը չի ստացվի:
Թե որ լիներ գծագիր
Կփնտրեինք ուշադիր,
Իսկ սենց... փնտրի ինչքան կուզես.
Ինչքան կուզես քչփորիր:
Որտե՞ղ գտնել, ո՞նց ճարել
Այն-Ինչ-Չի-Կարող-Լինել
Չէ՞ որ չկա դա աշխարհում.
Յենց այդպես է սահմանվել...

Արուս

Սիրելիս, չնեղանաս,
Կներես ավել-պակաս:
Երեւում է ինքդ պիտի,
Էս անգամ արշավ գնաս:
Արտասահման զգուշ եղի,
Չգեստդ մաքուր միշտ պահի:
Չրույցներին մի խառնվի
Ծանոթություն մի կապի:

հունսափի՛ր դատարկ վեճից,
Ոլոր-մոլոր ճամփեքից,
Առողջության մասին հոգա,
Կեր թթվասեր ու խավիժ...

Թորոս

Դու, Արուս, չվախենաս:
Լավ կլինի, կտեսնաս:
Կկատարեմ ինչ որ պետք է
Ու ետ կգամ անվնաս:
Քանի չկամ չտխրես...
Սուսամբարը կջրես...
Կուզես՝ քանոն կգարնես կամ,
Կուզես՝ կասեղնագործես:
Իսկ թե մեկը հայտնվի,
Որ հանգիստդ խանգարի՝
Բացատրելը ավելորդ է.
Թավեն ձեռքիդ տակ պահի...

Խեղկատակ-ծաղրածու

Թորոսը ելավ անդրծովյա արշավ: Չորավարն
իմացավ՝ վերջին խելքն էլ կորցրավ: Վազում է
պալատ՝ զեկուցելու հապշտապ, որ Թորոսի վերջն է
հաստատ: Անցքն էլ շքանշանի ծակել է բաճկոնին...

Թագավոր

Լավն է լուրը, թե հոռտես
Չեկուցիր ինձ ինչ գիտես.
Լավ է դառն իրողությունը,
Քան հաճելին, սակայն կեղծ:
Բայց թե լուրը, որ կասես
Կրկին լինի... ոչ էնպես,
Դու եղ ճշմարտության համար
Մի տաս տարով կնստես...

Չորավար

Չեկուցում եմ. քիչ առաջ
Չվեց Թորոսն էն տհաճ:

Փառք քեզ աստված ազատվեցինք
Արևախումբից վայրահաչ:
Թե ուզում է, թող հիմի
Նա ծովերում զվռնի.
Էդ մոռլթը տեսնելու բախտ
Մեզ այլեսս չի սպառնի...

Թագավոր

Դե, դայակ, դու ստեղ արի,
Ու մազերս հարդարի
Ծոծրակիս էն սեւ մազերը,
Դուզ շարքերով դիր սանրի:
Սպիտակներն լավ աշի,
Ու սեւերի տակ քաշի:
Հա՛, սանրով էլ մի՛ սղոցի,
Որ քաչալս չմաշի...

Դայակ

Ի՞նչդ սանրեմ էս գլխի,
Թե քաչալը կփայլի
Ախր յուրաքանչյուր մազդ
Էստեղ պիտի հաշվառվի...
Ու ինչի՞դ է պետք կասե՞ս
Էս տարիքում կինը քեզ
Ախր որպես տղամարդ դու,
Կներես, արժեք չունես...

Թագավոր

Թեեւ մազեր ես չունեմ,
Սակայն պիտի պսակվեմ:
Պարսից շահն էլ քաչալ ունի,
Հետն էլ՝ քառսուննոց հարեմ:
Իսկ ես կուզեմ սոսկ մի կին
Բերեմ որպես ամուսին:
Մի՞թե ամուսնական մասով
Չեմ քաշի լույնիսկ մեկին:

Դայակ

Շահը ըստ ամենայնի,
Չա՛մ կեցվածք, հա՛մ ուժ ունի,
Իսկ քեզ, սատկած, մեկը Նայի,
Թագի տակից չի տեսնի:
Քո տարիքում ծերունի
Ուժն էլ հինը չի լինի:
Մի մոռացի, քո տարիքը,
Չարյուր տարուց էլ կանցնի...

Թագավոր

Չետո ինչ՝ հարյուր տարի.
Մարդս լինի քաջարի:
Սերը, ինչպես որ ասում են
Երբեք չի հարցնում տարիք:
Նենց որ դայակ լեզվանի,
Ինձ էլ տարիք չի հարցնի:
Թե սիրո օրենքն էդպես է՝
Ես էլ կըլ՛նեմ պիտանի...

Դայակ

Դու նրանց ես նմանվում,
Որ հաչում են՝ չեն կծում
Ոնց որ լորտու լինես խղճուկ,
Էլ ավելին չեմ ասում:
Որ ուրիշի կին գողնաս,
Պիտի ավյուն ունենաս:
Իսկ քո հիմնական խնդիրն է
Որ գերեզման չգնաս...

Թագավոր (Ձորավարին)

Դո՛ւ ինչու եւ լուռ այդքան,
Ծոճում ես շքանշան:
Չե՛ս տեսնում, ոտնահարում են
Վարկանիշը պետական:
Արքային են անպատվում,
Նախարարը՝ չի խոսում
Դու պաշտպանության գծով ես,
Դե, ետ մղի թշնամուն...

Չորավար

Ախր կանայք մեր մասին
Երբեք լավ բան չեն ասի
Դու քո ուժին չկասկածես,
Սիրեկան ես թոփ դասի:
Քայլդ հպարտ, տեսքդ՝ մահ,
Մեջքի կողմից՝ իսկը շահ:
Միայն թագը միքիչ թեքի,
Որ չկախվի դնչիդ տակ...

Թագավոր (Դայակին)

Տե՛ս, որ թշնամի չէ նա,
Էնպես ասեց, ինչպես կա,
Իսկ նա էնքան էլ հիմար չի,
Որքան ապուշ կերեւա:
Իսկ քեզնից, ա՛յ անաստված,
Միայն ամոթ ու կաթված:
Ու ես վաղուց կասկած ունեմ,
Դու լրտե՞ս չես սողոսկած...
Իմացել եմ՝ չես լսում,
Ու էլի ես վնասում,
Կյանքում շատ լուրջ ինդիքներ եմ
Խոստանում ես քեզ բազում...

Խեղկատակ-ծաղրածու

Արուսի մոտ է արքան գնում՝ ուշադրություն
դրսետորում: Կառքում է նստած, բույրերով հոտած,
հետեւից՝ շքախումբ: դեմքերին՝ հուզմունք, հետեւից՝
սնդուկ՝ կոզինախ ու պնդուկ: Ամեն ինչ ըստ կարգի՝
գնում է արքան հարսնառքի...

Թագավոր

Արքայի հրամանով
Թորոսն երթաց ծովեծով
Դե ես, նրան ես կողմերից
ճամփու դրի մի խոսքով:
Որ դու մենակ չմնաս
Լավ է կինը իմ դառնաս:

Բա՞ր ինչ... Ես շատ հարգված մարդ եմ
Ունենոր ու անվնաս...

Արուս

Չհասցրեց դեռ Թորոսն
Անել մի քայլ դեպ փողոց,
Ագռավներն արդեն հասել են
Թորոսի բանջարանոց...

Թագավոր

Լսի՛ աղջի, լավ կլներ
Առաջարկս չմերժվեր.
Ամեն օր հո հյուր չե՞ն գալիս
Այրիացած արքաներ...
Քեզ ասում եմ. հենց հիմի,
Պսակվելուն պատրաստվի.
Ուրախությունից շշմել ե՞ս՝
Չոտ քաշի անուշադրի:

Արուս

Արի լավ է դու արքա,
Ուրիշներին աչք տնգա:
Իսկ իմ հոգսը՝ իմ Թորոսն է
Ու սպասելը՝ մինչեւ գա:

Թագավոր

Վերջ տուր, աղջի՛ սուտ հույսեր
Թորոսին չարժե սպասել:
Չիմա ինչ-որ մի Չոնկոնգում
Նա խմում է մի կոկտեյլ:
Ինքդ դատիր, անուղեղ.
Նա էնտեղ է, դու՛ էստեղ:
Կա՛ր Թորոսը, չկա հիմի.
Մնացել է մի թաց տեղ:

Արուս

Կուզես՝ ծեծի ինձ քարով,
Կուզես՝ հատի ինձ թրով,

Մեկ է. ես քո ամուսինը
Չեմ դառնալու քո կամքով:

Թագավոր

Լսիր, չարժե ինչ սադրել,
Ու անվերջ կատաղացնել.
Անցած շաբաթ ինձ Փարիզից
Գիյոտին են ուղարկել:
Ասածիս լույսի ներքո
Ընդունի, որ մարդն եմ քո
Ես էլ, վերջը, ջղեր ունեմ,
Վերջը Էրկարթի՞ց չեմ հո:

Արուս

Յեռացիր, ստոր, ես տնից
Ու հանիր ինձ քո մտքից:
Իսկ չգնաս՝ ես կարող եմ
Թավայով էլ տալ վրից:

Թագավոր

Ո՞վ կա Էստեղ՝ դռներին.
Կապանք սրա ձեռքերին:
Էդ ի՞նչ նոր սովորություն է
Թավայով՝ թագավորին:
Բանտում միքիչ կտխրես
Եւ ուղեղդ կդգես:
Կամուսնանանք մինչեւ ձմեռ,
Կուզես, աղջի, թե չուզես...

Արուս

Որ ինձ բռնեք, ա՛յ անխելք,
Դուք շատ պիտի չարչարվեք:
Ցտեսություն, անբախտ ընկեր,
Գուցե մի օր տեսնվենք...

(Արուսը փոխակերպվում է տատրակի ու թռնում գնում է:)

Խեղկատակ-ծաղրածու

Թորոսը մոտ կես տարի թափառեց կողմերով աշխարհի: Ուտում էր մանգո, թե պիստակ, իր գործը հիշում էր հստակ: Հրաշքեն՝ աշխարհում, շնից շատ են լինում, իսկ այն հրաշքի, որ պետք էր, չէր երեւում հետքը: Տխրում է Թորոսը՝ ժամանակը հոսում է: Որոշեց. առանց խոճապի. փնտրեմ ամերիկյան ափին: Լողում է Թորոսը՝ անցնում օվկիանոսը, մայրամուտն՝ առջեւում, արշալույսն՝ ետեւում: Հանկարծ կես ճամփին մոլեգնեց քամին: Քիչ էր դարդը եւ առ քեզ մի հատ էլ: Նավն էլ թարսից՝ բեկվեց մեջտեղից... Երբ քամին նվազեց, Թորիկն աչքը բացեց. պառկած է ջրին, անվսաս լիովին: Տեսնում է կղզյակ՝ ասես մի նավակ: Լողալով ափ ելավ կարծեց տեղ հասավ: Քարտեզին նայեց, բայց... հողը չէր ուզած: Այլ կղզի կորած, գրողը տարած, գուցե քարտեզն է ինչ-որ վնասված: Լսում է Թորոս լուրթյունը, ընկալում վիճակի լրջուրթյունը...

Թորոս

Ամբողջ աշխարհն եմ անցել,
Որքան երկիր եմ տեսել,
Բայց ավելի տխուր վայրում
Անկեղծ ասած չեմ եղել:
Լրիվ անմարդաբնակ
Քար ու կավից մի հարթակ
Եւ որ կողմ էլ հայացք գցես
Ո՛չ անտառ, կա ո՛չ գետակ:
Այդքան չէր լինի չարիք,
Եթե լիներ ուտելիք,
Գոնե սիբեիս կամ ավելուկ,
Գոնե խղճուկ մի ընթրիք...

Ձայն

Ով ուզում է ուտելիք
Թող համենա մեր տանիք.
Ես դրանից փթով ունեմ,
Ես դրանից ունեմ լիք:

Ահա, ինդրեմ, նոր թխած,
Թոնրի համեղ լավաշ-հաց,
Ահա դեղձի հյութ, մուրաբա,
Ահա խոզի խորոված:
Ահա լոլիկ ու բիբար,
Ահա դուլյով խավիար,
Ահա իշխան, սիգ Սեւանի,
Ահա կարիբյան օմար...

(Հայտնվում են ուտեստներով սեղաններ:)

Թորոս

Ի՞նչ հրաշք է ես սակայն:
Որտեղի՞ց է հնչում ձայն:
Թաքնվելու տեղ էլ չկա.
Միայն երկինք ու օվկիան:
Ո՞վ ես, տեր, պատիվ արա,
Ամբողջովին երեւա:
Անհարմար է հյուրը եսպես
Մենակ-մենակ կշտանա:
Ինչ էլ լինի քո կղզում
Օրդ ուրախ չի հոսում
Իսկ միասին թուղթ կխաղանք,
Կամ կխմենք երկու կում...

Ձայն

Ճիշտ ես: Բայց իմ արտաքինն
Ինձ համար էլ է գաղտնիք:
Ինքս էլ մեկ-մեկ կասկածում եմ,
Գոյությունն ունե՞մ, թե՞ չիք...
Անհաշվելի դարդ ունեմ
Կա ուտեստ՝ բերան չունեմ,
Կա բռնորթի՝ ինչո՞վ քաշեմ,
Կա աթոռ՝ ինչո՞վ նստեմ:
Հազար տարվա մեջ ասեմ,
Ձանձրացել եմ ես արդեն:
Մի պահ կախվել որոշեցի,
Բայց ո՞նց. ախր, վիզ չունեմ:

Թորոս

Ա՛յ քեզ հրաշք: Փաստորեն,
Կարողացա ես գտնել
Այն-ինչ-Ամբողջ-Լուս-Աշխարհում –
Երբեք-Չի-Կարող-Լինել:
Փոխարենը՝ ստեղ նստած,
Քյանքդ քաշես դարդոտած,
Գուցե խմե՞ս հայոց հողում
Արքայի հետ մի կենաց...
Միքիչ զբոսնի՛, կազդուրվի՛,
Աշխարհին ընկերացի,
Ի՞նչ կյանք առանց արկածների:
Կյանք չի. վերցրու՝ դեն գցի...

Ձայն

Ես լավ հեռանկարի
Երբեք չեմ հակառակվի,
Մեղվափեթակ հյուր կգնամ,
Միայն հանրույթ գտնվի:
Ուր ուզես՝ հրամայի՛.
Կուզե՞ս բանվոր հանքերի.
Ու ամեն ինչ ձրի կանեմ,
Ու չեմ ուտի, չեմ խմի:
Ես ցանկացած գործ գիտեմ,
Ես դուռ ուզած կբացեմ,
Ես քեզ ուզած բան կճարեմ,
Ոջիլ նույնիսկ կպայտեմ...

Թորոս

Ոջի՞լ... Էդ լավ ասացիր:
Դա էլ վատ չի, իմացիր:
Բայց ոջիլով, նույնիսկ՝ պայտած
Դժվար հասնենք մեր երկիր:
Թե որ իրոք Էդ գործում,
Ունես դու լավ համարում,
Արի հարմար մի նավ ճարի,
Որ Եստեղից հասնենք տուն:

Առտու, ժամը մոտ հինգին,
Պետք է լինենք մենք ճամփին,
Որովհետեւ Յայաստանում
Կարոտել են մեզ կարգին...

Խեղկատակ-ծաղրածու

Իսկ արքան ժամանակ չի կորցնում. մարդակեր ցեղի
դեսպանին է պատվում: Լոնդոններ-Յոռոմները
քաշվել են տները, արքային մնացել են մանրոտ
դեսպանները: Դեսպանի առաջ արքան՝ ցատկոտում
է բուռակի նման. առ էս քեզ հարս, ու էլ ոչ մի հարց:
Երեւի ճարը լրիվ է հատել, թե որ էսպիսի փորձանքի
է հասել: Լավ, դե մի կերպ կդիմանան՝ միայն թե
աղջիկը տանը չմնա...

Թագավոր

Մենք ձեզ շատ ենք կարոտել,
Երջանիկ ենք ձեզ տեսնել:
Վաս իստ դաս, սալամ ալեյքում,
Բոնա սերա, վերի վել:
Որտեղի՞ց եք ծնունդով...
Ամուրի՞ք եք, ապահո՞վ:
Չե՞ք ցանկանում մեր դստերը
Միքիչ զբաղել զրույցով:

Դայակ

Ո՞ւմ առաջ ես ա՛յ հոգևած,
Քեզ կոտրատում շվարած:
Քո դեսպանը, ինձ կներես,
Ծառից նոր է իջել ցած:
Գոնե գլխարկ ունենար
Էդքան չէր լ՛նի անհարմար,
Ախր դրա հագի շորը՝
Ուլունքներն են երկու շար...

Թագավոր

Դու լրտես ես. էդ հաստատ.
Ինձ քաշում ես անընդհատ:

Ախր ամբողջ աշխարհի դեմ
Ինձ դարձրել ես վատամարդ:
Հագիվ փեսա եմ ճարում,
Իսկ նա իրենց՝ վռնդում:
Վերջը ո՞ւմ հետ եմք, ասա՛ ինձ
Աղջկան ամուսնացնում:

Դայակ

Բայց դու եղ դեմքին նայի.
Լոշտո, քթում՝ օղ ունի
Ամբողջ կաշին էլ չեչոտ է,
Ոնց որ կկվի ձու լինի...
Նույնիսկ ես՝ ի՞նչ թաքցնեմ,
Ծոցը չեմ ուզի մտնեմ,
Էլ ոնց, ասա, մեր աղջկան
Սենցի հետ ամուսնացնենք...

Թագավոր

Թե որ ճար չեն ունենում,
Ոսկին մոխրում են փնտրում:
Մեր աղջիկն էլ դեմքի հարցով
Գեղեցկությամբ չի փայլում:
Հիմա՝ որը պատահի.
Չեչոտ լինի թե՛ վայրի,
Քանի որ եւ չեչոտներից
Երկրպագու նա չունի...

Դայակ

Ախր վայրի ա, սարսափ,
Կուլ է տալիս ինչ գտավ:
Մարմարյա ափսեն հիշո՞ւմ ես,
Իմ արեւ. ծամեց կերավ:
Թե որ ուզեր սրիկան,
Հավ, հարիսա, կամ իշխան՝
Բայց ուտում ա ինչ պատահի,
Ճենապակի ու ճոպան:

Թագավոր

Ինչ էլ լինի՝ հյուր է նա.
Թող ամեն ինչ ունենա:
Ճենապակուց, ճոպանից էլ
Պակաս չունենեք՝ կստանա:
Թե իշխան ձուկ նա չուզի,
Տուր ինչ փորը կմարսի:
Մեկ էլ տեսար էդ կուշտ փորով
Մեր աղջկան համոզի...

Դայակ

Դեսպանները, չափ չունեն
Ձրի՝ թույն էլ կլափեն:
Գուցե նա եւ անվտանգ ա,
Բայց թող նրան հետեւեն:
Որպես աներ դու սաստի.
Կեր ասա, բայց մի պայթի.
Քանի որ էդ պիտրժակով
Իր կնոջն էլ նա կուտի:

Արքայադուստր

Սենց ամուսնու հետ գնամ
Վերնախավո՞ւմ երեւամ...
Չերիք չի որ մարդակեր է,
Տեսքով մի բան չի անգամ...
Թեկուզ այդ անձավացին,
Ինձ լրիվ ոսկեզոծի,
Պատասխան եւ ոչ մի կիրք էլ
Նա իմ մեջ չի հարուցի:

Թագավոր

Դու դեսպանի հետ կացի,
Միքիչ հետն առանձնացի:
Իսկ հետո, երբ ընտելանաս
Սերը ճամփեն կբացի:
Չամ էլ, թե ես վայրենին
Արտաքինդ ըմբռնի՝
Մարդակերության հարցում իր
Ախորժակը կկորցնի...

Արքայադուստր

Չեր, դու նվաս էլ որքան
Ե՛ս պիտի իմ խոսքը տամ.
Թույն կընդունեմ, չի լինի, որ
Մարդակերի կին դառնամ:
Իսկ թե Թորո՛ւն ինձ ուզի,
Առաջարկով հայտնվի
Նա միակ ու նախընտրելի
Թեկնածուն իմ կլինի...

Թագավոր

Չայլես տարար, շատախոս:
Չե՛նց մի բառ գիտես՝ Թորոս,
Թորոսի վրա մարմինդ
Ո՛նց որ թե կպել ա քոս:
Քո Թորոսը կես տարի
Չատակին ա օվկիանի,
Ու քանի որ խորտակված ա
Կնգա կարիք էլ չունի...

Արքայադուստր

Թե դա հաստատ իմանամ
Չացադուլի կգնամ:
Էդ էլ ինձնից քեզ, հայրիկս,
Վրեժն իմ քաղաքական:
Էլ չեմ ուտի խավիար,
Դույլով՝ ո՛նց սովորաբար
Եւ հյուձվելու հողի վրա
Կհեռանամ էն աշխարհ...

Թագավոր

Ուր էլ նայես, որ վայրկյան
Նախարար, թե ազգական՝
Բոլորը վնասարար են.
Դարձել են ազատական...
Բա սրան ու կասե՞ս կյանք.
Ոչ ոք չունի կարեկցանք:
Ա՛յ կգտնեմ մի խուլ անտառ՝
Անտառապահ կդառնամ...

Խեղկատակ-ծաղրածու

Տարին անցավ, մյուսն եկավ, Թորոսը տուն
վերադարձավ: Իսկ տունը՝ չկա, մնացել է կմախք,
հեծան ու ծպեղ, եղինջ ամեն տեղ: Իսկ քիվի տակին
որպես մի գնդիկ Նստած է թռչնակ՝ անտառի
տատրակ...

Թորոս

Դե՛, տիկին ջան, վեր կացի՛,
Մի սեղան մարդուդ գցի՛:
Արի հանի վառարանից
Բոթոններից քո հացի:
Լցրու յուղոտ կաթերից,
Քո էն թանձրոտ խաշերից
Ծիպոտի պես Նիհարել եմ
Անդրծովյա ճաշերից:
Ամբողջ տանը՝ անարգել,
Լոկ քամին է բնակվել:
Կասկածելի բան է ինչ-որ,
Չո մի բան չի՞ պատահել:

(Տատրակը փոխակերպվում է Արուսի:)

Արուս

Գալո՞ բարի, ա՛յ Թորոս,
Երկա՛ր արշավ չէ՞ր հերոս:
Թե՞ Արուսիդ չէիր հիշում,
Որ ողջ տարի չեղար հոս:
Արտասահման կողմերում,
Երեւի թե չեն տխրում:
Ընկերուհի վայրե գտար
Ու տաքացար իր գրկում...

Թորոս

Աշխարհ տեսա, հրաշքներ,
Ժոզեֆաներ, Լյուբաներ
Բայց քեզ նման գեղեցկուհի
Այնտեղ չկա, իմ ընկեր:

Ու քեզ ասեմ, իմացի,
Թե՛ն հեռու գնացի,
Չնարամիտ թագավորի
Ուզեցածը ճարեցի...

Արուս

Թե գիտնայիր որ շահից,
Չեռացրեցին քեզ երկրից,
Մի քայլ անգամ չէիր անի
Քո հայրենի դարպասից:
Չենց մեկնեցիր, էդ արքան,
Էդ բիծուկը անզգամ,
Ինձ սկսեց սիրահետել,
Որ ես կինը իր դառնամ:

Թորոս

Մի՞թե... Ա՛յ քեզ սրիկա
Դե ու եղիր ենթակա,
Դե ու գործին հոգով տրվիր,
Դե ու մարդկանց հավատա...
Լավ, սպասի, ես իրեն
Ինչն ինչոց է կպատմեմ:
Ես նրան մինչ կրունկները
Կապտուկներով կներկեմ...
Բոլ է էշի տեղ դնին
Չայաստանի տղերքին:
Կորցնելու բան ես էլ չունեմ,
Կապանքներից բացի իմ:

Խեղկատակ-ծաղրածու

Բարկացավ Թորոսը, դուրս եկավ փողոցը:
Գյուղացիք որոշին սատարել Թորոսին: Արձանը
առավ հրացանը, Չուսին առավ կացին, Ասպետն
առավ փետ: Եւ անցան Թորոսի հետ՝ արքայի դռանը
մետ: Դիմացից՝ զորավարը, անիծյալ նախարարը:
Կողքով մոտ վազեց, կոպերը թարթեց, աչք դրավ
ցույցին՝ ու վազեց զեկուցի:

Չորավար

Հավաքվել է դռան մուտ
Անունն ինչ է... ժողովուրդ:
Գործը, մի խոսքով, մտնում է
Հասարակական վարույթ:
Իսկ ամենի ետեւում,
Նույն թորոսն է թաքնվում.
Ժողովրդին նա սադրում է
Կատարել հեղաշրջում...

Թագավոր

Է, բա դո՞ւ ինչ պիտ անես,
Սոււերովը ծա՞կ մտնես:
Մենք էլ, հեն ա, քեզ պահում ենք,
Որ արքային պաշտպանես:
Դավի պոչին, անպայման
Շքանշան նոր կտամ,
Միայն մի ձեւ դու մոգոնի,
Որ ես գահին իմ մնամ...

Չորավար

Շքանշանն ինչ անեմ,
Հարյուրից էլ շատ ունեմ.
Տոնածառի պես եմ դառել,
Մնաց մեջքիս որ կախեմ...
Պաշտպանել քեզ փորձանքից,
Իմաստ չունի այս պահից:
Քո ստորոպթյան համար հիմի
Չես խուսափի էլ պատժից...

Խեղկատակ-ծաղրածու

Էշից էլ է էշ, բայց տե՛ս ոնց խոսեց: Կատաղեց
արքան, բայց ո՞նց հախից գա: Էս խառը պահին, չես
խփի մոթին: Արքան շեմքից իջավ ցած, ունքեր
կիտեց խստացած, իսկ պալատի դիմաց կարծես
ամբողջ Հայքն է հավաքված:

Թագավոր

Էդ, ձեր մերը, ո՞նց կուզեք,
Հասկանանք ձեզ... Ներեցեք:
Մենք հո ինչ-որ Հունաստան չենք,
Որ ցույցերով զրուցենք:
Նուբարաշեն թե կուզեք,
Մեկ առ մեկ առաջ անցեք.
Էնտեղ իսկույն ձեր խելքերը
Լիակատար կմաքրեք:

Թորոս

Թե խոսում ես մեր խելքից,
Այն պայծառ է հենց խորքից.
Փառք քեզ աստված տարբերում ենք
Մանուշակը թրիքից:
Դու ինչո՞ւ ինձ խաբելով
Ուղարկեցիր ծովեծով:
Որ պսակվես իմ կնոջ հե՞տ
Հրեշավոր ծրագրով...

Թագավոր

Էդ որտեղի՞ց ասա քեզ
Էդպես մտքեր, աներես,
Որ բռնես ու, ա՛յ սրիկա,
Կարգին մարդկանց սեւացնես:
Բա կսագի ինձ, վերցնեմ
Քո կնգանը աչք տնգեմ...
Ես էլ ասի. լավ տղա է,
Արտասահման ուղարկեմ...

Թորոս

Լավ է, փորձես քեզ զսպել
Մենք թեյի քեզ չենք կանչել
Իսկ թե կարգին քեզ չպահես
Կարամ մոթիդ քո իջնել:
Քեզանից՝ սրիկայից,
Չզված են սկսած Վանից:
Դու մեր ամբողջ ազգի հոգուն
Թքեցիր... ի դեմս ինձ...

Թագավոր

Է՛ր Թորոս իզուր եղպես
Ազգը իմ սիրում եմ ես:
Առանց ազգիս մասին մտքի
Բա ինձ մի օր կտեսնե՞ս...
Ձեմ եմ ուտում լուսբացին
Ու խորհում. բա ա՞զգը իմ:
Խավիարն էլ կուզ չի գնում,
Չի երեւում իմ աչքին:
Լուսամուտի մոտ անթուն
Գիշերներ եմ լուսացնում.
Դարդ եմ անում Յայթի մասին,
Ո՞նց ես իմ խեղճ Յայոց տուն:
Չորավարն է մեղք գործել,
Յայրենիքը կողոպտել,
Դա հենց նա է, իշու ձագը,
Իմ պատվի հետ խաղացել:
Թող նա դուրս գա... Յը՞ տեսնեմ.
Յես ա վզին կհագնեմ..
Կպոկեմ շքանշանը,
Ու մռուփին կզարկեմ...

Չորավար

Ո՛չ, ո՛չ եղբայրք... Ձեզ հանուն
Աչքս եմ կորցրել ես մարտում...
Մի՞թե ես կմասնակցեի
Ժողովրդի դեմ գործում...
Մեղավոր եմ: Շեղվեցի:
Չդիմացա: Կորցրեցի:
Չէի, չէի, չէի, չէի...
Կողքի՞ն իսկ չկանգնեցի:
Կարդարացնեմ: Կտանջվեմ:
Կտառապեմ: Կնստեմ:
Շահագործող վերնախավին
Առնչություն էլ չունեմ...
Այդ Ձադուն է մեղավոր
Մեր ոսոխը ահավոր,
Նրա կողքին Վիշապն անգամ
Օձ էլ չի, այլ մանր որդ:

Յը՞ եղ ո՞ւր ես, ա՛յ տիկին.
Նայի՛ր մարդկանց աչքերին
Յես ա, վայ թե չեմ դիմանա
Սրով կիջնեմ քո վզին...

Ջադու պառավ

Տարր եմ ես ազգագրական,
Փաստաթուղթ ունեմ պատկան,
Ու էստեղից ես կարող եմ
Չվել ուզած իմ վայրկյան:
Ցրտից լինի, թե շոգից
Մեղադրում են վիուկիս,
Իսկ վնասն ինձնից նույնքան է,
Որքան դաշտի ծաղիկից:
Դե մի պահ, դե գերդ կատակ,
Շեղվեցի ուղուց շիտակ,
Բայց ես ես երկրի զավակ եմ
Թեկուզ ախմախ, բայց զավակ:
Թե դատել՝ էն երկուսին
Իմ չար գործակիցներին:
Ես դրսից եմ միայն կեղտոտ,
Բայց մաքուր է իմ հոգին...

Թորոս

Տեր աստված, նայում ես ձեզ.
Չգիտես, թե ինչ ասես:
Մեկդ մյուսին գեշ է հանում,
Չնայած որ ինքն է գեշ:
Եհշտ է, հայ ազգն իր հոգում
Քենը երկար չի պահում,
Բայց ձեզ պիտի հիմա դատեմ,
Յենց ես հրապարակում:

Թագավոր

Ինձ ներիր իմ սիրելիս:
Ես տականք եմ հաստավիզ:
Ես կաքսորեմ ինձ Մանազկերտ,
Ես կաքսորեմ ինձ Գորիս...

Միայն ոչ Համգաչիման,
Դրան հազիվ դիմանամ:
Էդտեղ եթե երկար մսամ
Հաստատ պապիս հյուր կերթամ:

Չորավար

Գիտակցում եմ մեղքը իմ,
Կերպը, չափը՝ խորագին,
Եւ խնդրում եմ ուղարկել ինձ
Ընթացիկ պատերազմին:
Կամ պատրաստ եմ բանտ նստել
Նաեւ կուզե՞ք՝ աքսորվել.
Ցանկալի է բայց՝ ամռանը,
Եւ կամ Կիպրոս, կամ Սեյշել:

Չաղու պառավ

Բա ե՞ս ասեք ուր գնամ
Գոնե Աղդամ ես մսամ
Էդտեղ գուցե հողի ծերին
Մի կերպ էդպես դիմանամ:
Հոգուս հանգիստ երեւի
Արեւելքը կբերի.
Էն կողմերում հաստատ կլ՛նի
Դեղեր եփել ներվերի:

Թորոս

Կնստեցնենք ձեզ տակառ,
Լավ կմեխենք, ու՛ Գետառ,
Յուլա կերթաք, հո՞ չենք տալու
Թռչող կարպետ մարդատար:
Ու թող գետը ձեզ տանի
Կողմերին Թուրքմենստանի
Իսկ որ Էնտեղ շատ չտխրեք,
Կտամ իմ հին քեմանին:
Ծիշտ է պիտի այն լարվի
Առանց երկու լարերի,
Բայց լավ թե վատ մշակույթը,
Հաստատ ձեզ չի խանգարի:

Արքայադուստր

Թե որ ճիշտը ձեզ ասեմ,
Թող ծովից էլ դեն կորչեն:
Նրանց բոլոր ինդիրները
Չաստատ, որ իմ տանձին չեն:
Արքան տուժեց թունալից
Խարդախության երեսից:
Այդ հենց նա էր, արևախումբ,
Չեռացրել մեզ իրարից:
Եւ ահա, աստված տվեց.
Բռնապետը տապալվեց,
Եւ կարող ենք ամուսնանալ
Թե որ այսպես պատահեց...

Թորոս

Չա՛... Բայց պիտի քեզ ասեմ
Երկու կնոջ պետք չունեմ
Չգացմունքներիդ ավելի շատ
Ազապ մարդկանց կհուզեն...

Դայակ

Ի՞նչ է գժվար սիրելիս:
Բախտը ինքն է քեզ գալիս:
Ամեն մեկին եղպիսի բախտ
Աստված կյանքում չի տալիս:
Գիտե՞ս քանի թեկնածու
Ունի էս մեր հարսնացուն.
Էդ ցուցակի ամբողջ ցանկը
Ունի հազար մի ածու:
Իրենք սրտի թրթիռում
Նրա սիրուն են սպասում,
Էնպիսի մրցակցություն է
Որ իրար են հոշոտում:
Երեկ հարսնախոս եկան
Մի լեհ, մի չին, մին գերման,
Բայց դե ստացան իսկույն եւեթ
Բացասական պատասխան:

Իսկ դու աղքատ հրաձիգ՝
Ո՞ւր կգտնես սենց կնիգ:
Թագվորաղջկան դու վերցրու
Ու կազմեցեք ընտանիք...

Թորոս

Ես ոչ թուրք եմ ոչ էլ քուրդ,
Ընտանիքի մարդ եմ զուտ,
Ամուսնուհիս էլ՝ Արուսս
Ինձ տրվել է ի վերուստ:

Արքայադուստր

Չէ՞ս ուզում մի ճար անես
Իմ դարդերս դարմանես:
Բայց հիշո՞ւմ ես, որ ի վերջո
Թագվորաղջիկ եմ դեռ ես:
Լսի՛ր: Թե որ չեմ ստանում,
Այն, ինչ քեզնից եմ ուզում,
Չայտնվում ես անմիջապես
Ուղիղ դահճի ճանկերում:

Դայակ

Լավ երգեցիր: Ո՞նց, կասե՞ս
Չիմա դահիճ կգտնես:
Նա, հենց հորդ տապալեցին,
Իսկույն փախավ Բենարես:
Չիմա պետք է՝ իմացիր՝
Լինել բարի դրացի.
Բռնապետություն հարկի չէ,
Դեմոկրատ արի դարձի:
Ասեմ, լավն է առավել,
Թե չվես դու եդ... Բրուսել,
Թե որ այստեղ կատարվում է,
Ներողություն, կարուսել:
Դու ներիր իրեն Թորոս
Գլխում տիրել է քաոս,
Էդ գրքերից իրա խելքում
Գոյացել են դար ու փոս:

Չափից շատ է կարդացել՝
խելքից կարգին թուլացել.
Գուցե միքիչ կգազազի
Ու կսկսի խաղաղվել...

Թորոս

Մի՛ տխրիր թագվորադջիկ
Որ չդարձար ինձ կնիկ.
Որ մեր սերը փոխադարձ չէր
Կներես դու ինձ քույրիկ:
Բայց քանի որ ես կյանքում
Ես պարտք մնալ չեմ սիրում,
Քո սրտի եղ. նեղությունը
Մեղմացնել եմ ես ուզում:
Շուշվա բերդից մինչ Բասեն
Ամեն կողմ կխուզարկեմ,
Թեկուզ ծովի հատակից էլ
Քեզ փեսացու կգտնեմ:

Արքայադուստր

Չամաձայն եմ... Բայց լսի.
Ամեն մեկին չեմ ուզի:
Ես այնպիսի մարդու կուզեմ,
Որ քեզ նման հենց լինի:
Լինի պատշար, թե դերձակ,
Բժիշկ, դարբին, թե՛ բատրակ,
Ես մի պայման ունեմ միայն
Որ քեզ լինի երկվորյակ...

Թորոս

Երազանքդ, քեզ ասեմ
Անպայման հաշվի կառնեմ,
Թեեւ նման նմուշները
Շատ հազվադեպ կդիտվեն:
Իսկ խելքիս էլ՝ առավել.
Կրկնօրինակ չկա էլ:
Երեւի թե դու եղ. մեկը
Ինքդ էլ ես նկատել:

Բայց թե խոսք եմ ես տվել
Բան կփորձեմ հայթայթել,
Թե որ արդեն խոստացել եմ
Երկվորյակիս իմ գտնել:
Դե իսկ հիմա մի խորհուրդ,
Ի՞նչ եք կախել քիթ-մռուլթ.
Չոգեհանգիստ հո չի՞ հիմա,
Չակառակն է ժողովուրդ:
Չիմա պետք է չտխրել.
Պետք է ուտել ու խմել...
Կանգնիր ահա իմ առջեւում
Այն-Յինչ-Չի-Կարող-Լինել...

Ձայն

Ես վաղուց եմ՝ ստեղ կանգնած,
Պալատի պատին թիկնած,
Սպասում եմ, երբ կպրծնես
Քո ժողովը երկարած...

Թորոս

Կինդրեմ ազգիս պատվել
Կերակուրով զարմացնել:
Վաղուց արդեն նման ուտեստ
Մերոնք բերան չեն տարել:
Դիր սեղանին եւ հալվա,
Եւ պարսկական փախլավա,
Եւ հնդկական անուշեղեն,
Եւ տեղական մուրաբա:
Սեղանին դիր ամեն ինչ
Սամարկանդի սեւ չամիչ,
Արաբական համեմունքներ,
Եւ աղցաններ, եւ խմիչք:
Շվեյցարական պանիրներ:
Չոլանդական երշիկներ,
Էնպիսի քեֆ պիտի անենք,
Որ աշխարհը չի տեսել:
Չանիր օղի ռուսական,
Գինի, կոնյակ հայկական:

Էլ ե՞րբ խմենք, թե ոչ հիմա.
Փառք աստծո՝ առիթն էլ կա...

Խեղկատակ-ծաղրածու

Ես էլ քեֆին եդ եղա, խավիարից սեւ կերա: Փիլավը
կերավ փլավ, Արձանն՝ աղցան: Ալվարդը՝ խավարտ:
Իսկ Թորոսը հրաձիգ կերավ եփած յուղոտ սիգ: Իսկ
հենց կերավ յուղոտ սիգ, պրծավ հեքիաթն Ես
փոքրիկ: Իսկ թե սրտներովդ չի, թող պատմողը
ամաչի: Մարդ բռնի եդ տափակին թափով զարկի
քամակին: Բայց ի՞նչ օգուտ. մեկ է նա նույն տափակն
էլ կմնա: Չէ՞ որ տափակ մեր դարում դրանց բախտն
է միշտ բերում...